Հայաստանում պտղի սեռով պայմանավորված խտրական ընտրության և հարակից վնասակար գործելակերպերի հետազոտության

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Ծրագրի անվանումը՝	«Պտղի սեռով պայմանավորված խտրական ընտրության և հարակից վնասակար գործելակերպերի կանխարգելումը Հարավային Կովկասում. աջակցություն տարածաշրջանային, ազգային և Հարավ-Հարավ նախաձեռնություններին»
Իրականացման վայրը՝	Երևան և Հայաստանի բոլոր մարզերը
Մեկնարկի ամսաթիվը՝	Մարտի 28, 2022 թ.
Ավարտը՝	Հունիսի 24, 2022 թ.
Ֆինանսավորման աղբյուրը՝	ՄԱԲՀ/ԵՄ

Ա. Նախադրյալներ

ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (ՄԱԲՀ) 2020 թվականի Աշխարհի բնակչության կարգավիճակի մասին զեկույցում[1] (SWOP) նշվում է, որ այսօրվա դրությամբ պակասում է մոտավորապես 140 միլիոն կին ու աղջիկ՝ որդիների նախապատվության և պտղի սեռի խտրական ընտրության պատճառով, ինչն իրենից ներկայացնում է լայնածավալ գենդերային խտրականության դրսևորումներից մեկը: Ասիան և, հարաճող տեմպերով, Կովկասի ու Արևելյան Եվրոպայի որոշ երկրներ հայտնվել են ուշադրության կենտրոնում՝ կապված աղջիկների նկատմամբ կիրառվող վնասակար գործողությունների և գործելակերպի հետ: Վերոհիշյալ ռեգիոնների մի քանի երկրներում գենդերային խտրականությունը խթանել է սեռի հատկանիշով ընտրության տագնապալի միտումներ, ինչն իր ազդեցությունը կթողնի ապագա սերունդների վրա և կունենա ժողովրդագրական հետևանքներ, քանի որ աշխարհի բնակչությունը կազմում է 7,8 միլիարդ մարդ[2]:

Նման գործելակերպն ակնհայտ է այն երկրներում, որտեղ առկա են բնակչության նկատմամբ սահմանափակումների կիրառում, հայրապետական ընտանիքի կառույցը, շարունակաբար որդու նախապատվությունն և աղջիկների թերարժևորումը: Սեռերի հարաբերակցության հավասարակշռության խախտումը երկարատև ազդեցություն

[1] https://www.unfpa.org/sites/default/files/pub-pdf/UNFPA_PUB_2020_EN_State_of_World_Population.pd
[2] UNFPA_PUB_2020_EN_State_of_World_Population.pdf

կունենա նման երկրների ժողովրդագրական կառուցվածքի և բնակչության շարժընթացի վրա՝ առաջացնելով զգալի սոցիալ-տնտեսական հետևանքներ և հանգեցնելով ամուսնական տարիքի բնակչության գենդերային անհավասարակշռությանն ու աղջիկների և կանանց առավել ստորադասմանը: Հետևաբար, խնդիրը պահանջում է հետևողական և բազմակողմանի արձագանք: Վերջին տվյալները ցույց են տալիս Հայաստանում սեռերի անհավասարակշռության նվազման նշաններ: Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի, 2000 թվականին ծնունդներով հաշվարկած սեռերի հարաբերակցության ցուցանիշը Հայաստանում բարձր է եղել՝ կազմելով 120 տղա - 100 աղջիկ: Այս հարաբերակցությունը 2010 թվականին կազմել է 114 տղա - 100 աղջիկ: Ըստ Հայաստանի ծնունդների գրացման և վերջին տվյալների, 2018 թվականին՝ ծնունդներով հաշվարկած սեռերի հարաբերակցության ցուցանիշը նվազում է արձանագրել 111 տղա - 100 աղջիկ, իսկ 2020 թվականին այդ հարաբերակցությունը կազմել է 110 տղա – 100 աղջիկ[3]:

2016 թվականից ի վեր, երբ կատարվել է վերջին ուսումնասիրությունը, Հայաստանում շատ փոփոխություններ են տեղի ունեցել: Այդ ժամանակից ի վեր, երկիրը տեսել է 2018 թվականի Թավշյա հեղափոխությունը, 2020 թվականի Լեռնային Ղարաբաղի հակամարտության էսկալացիան և տուժել է COVID-19 համավարակից: Այս իրադարձությունների ֆոնի վրա կրիտիկական նշանակություն ունի մի նոր ուսումնասիրության անցկացումը, քանի որ վերոհիշյալ գործոնները ազդում են պտղի սեռի խտրական ընտրության վրա: Ազդեցության և նոր իրողությունների հիմնավոր գնահատումը թույլ կտա ավելի լավ հստակեցնել և հասցեագրել առաջարկվող միջամտությունները: Ուստի, 2022 թվականին ՄԱԲՀ-ի հայաստանյան գրասենյակի հետ համատեղ ՕքսԵՋԵն հիմնադրամը նախատեսում է անցկացնել համապետական հարցում պտղի սեռի խտրական ընտրության տարածվածության և պատճառների վերաբերյալ՝ գնահատելու փոփոխությունները մարդկանց վերաբերմունքում և մշակելու ապացույցների վրա հիմնված քաղաքականություններ ու ծրագրեր:

Բ. Նպատակ

Սույն առաջադրանքի նպատակն է նախկինում կատարված ուսումնասիրություններին համահունչ (ՄԱԲՀ 2011, Մարդկային զարգացման միջազգային կենտրոն 2016) մեթոդաբանության ու հետազոտական գործիքների միջոցով գնահատել սեռով պայմանավորված՝ հղիության արհեստական ընդհատումների տարածվածությունն ու պատճառները Հայաստանում, ինչը հնարավորություն կտա գնահատել նաև փոփոխություններն իրավիճակում վերջին 5 տարվա ընթացքում:

Գ. Առաջադրանքի նկարագրություն

[3] https://knoema.com/atlas/Armenia/topics/Demographics/Fertility/Male-to-female-ratio-at-birth#:~:text=Armenia%20male%20to%20female%20ratio%20at%20birth%20was%20at%20level,is%20a%20change%20of%202.20%25.

Ծառայություն մատուցողը պատասխանատու կլինի ապահովելու հետևյալ գործողությունների պատշաճ իրականացումը.

Գործողություն	Վերջնական արտադրանք/կատարողականի արդյունքներ	Վերջնաժամկետ
1. Իրականացնել համատեքստային վերլուծություն, ներառյալ՝ իրավական դաշտի, և գնահատել այն գործոնները, որոնք կարող էին ազդել պտղի սեռի խտրական ընտրության վրա վերջին 5 տարվա ընթացքում:	Ամբողջական զեկույց հայերեն և անգլերեն լեզուներով	Ապրիլի 10, 2022թ.
2. Վարել հարցազրույցներ հիմնական իրազեկողների (Առողջապահության նախարարության, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության), շրջանային ու տեղական բժշկական հաստատությունների ներկայացուցիչների (օր.՝ բուժհաստատությունների ղեկավարների, մանկաբարձ-գիենկոլոգների, ուլտրաձայնային հետազոտության մասնագետների), շրջանային և տեղական իշխանությունների, կրթական հաստատությունների (օրինակ՝ Երևանի պետական բժշկական համալսարանի), ոլորտում աշխատող ՔՀԿ-ների և այլ	Հարցազրույցների ամբողջական զեկույց հայերեն և անգլերեն լեզուներով	Մայիսի 15, 2022թ.

շահագրգիռ կողմերի հետ, որոնք կարող են իրենց ներդրումն ունենալ գնահատման գործընթացում:		
3. Հարցում անցկացնել ամբողջ երկրից պատահականության սկզբունքով ընտրված ընտանիքներում բնակվող 15-ից 49 տարեկան, երբևէ հղի եղած կանանց շրջանում:	Հարցման արդյունքների ամբողջական զեկույց հայերեն և անգլերեն լեզուներով	Հունիսի 10, 2022թ.
4. Կազմակերպել ստացված տեղեկությունների վավերացման քննարկումներ մարզերում՝ ներկայացնելու արդյունքները, մշակելու քաղաքականության բարեփոխման առաջարկու-թյուններ, այդ թվում համայնքային, մարզային և ազգային մակարդակներում: Ելնելով քննարկումների ընթացքում ստացված մեկնաբանություններից/ առաջարկներից, վերջնականացնել և հանձնել զեկույցը, առաջարկությունների հետ միասին:	Վավերացման աշխատարան պետական գործակալությունների, ՔՀԿ ներկայացուցիչների և այլոց հետ: Ամբողջական զեկույցը՝ հայերեն և անգլերեն լեզուներով	Հունիսի 22, 2022թ.
5. Հիմնվելով գնահատման արդյունքների վրա, մշակել հանրային իրազեկման նյութեր	Պրեզենտացիա/Առնվազն 2 քաղաքականության փաստաթղթերի պատրաստում և տարածում Ինֆոգրաֆիկաների պատրաստում՝ 2 հատ	Հունիսի 24, 2022թ.

Դ. Պահանջվող որակավորում, փորձառություն և փաստաթղթեր

- Հայաստանի Հանրապետությունում գրանցված և գործող կազմակերպություն

- Կազմակերպությունն ունենա Հանրապետության մակարդակով հետազոտություն կատարելու ներուժ
- Կազմակերպությունն ու թիմի փորձագետները պետք է հիմնավորեն գենդերային հավասարության խթանմանն ուղղված հետազոտական ծրագրերի իրականացման որակավորման կամ մասնագիտացված գիտելիքի/փորձառության առկայությունը: Դա կարող են լինել նախկինում իրականացված հետազոտությունների նմուշներ/հղումներ, հետազոտության փորձագետների կենսագրականներ
- Կազմակերպությունը պետք է ներկայացնի հետազոտության մեթոդաբանության և ողջ առաջադրանքի իրականացման իր տեսլականը
- Կազմակերպությունը պետք է ներկայացնի Առաջադրանքի մանրամասն բյուջեն,
- ՄԱԿ-ի և/կամ ՕքսԵՋենի հետ աշխատանքային փորձն առավելություն է:

Ե. Ինչպես դիմել

Մրցույթին մասնակցելու հայտադիմումը կարող եք ներկայացնել info@oxygenfund.am էլ. **փոստի հասցեով:**

Վերջնաժամկետը՝ 17.00, **մարտի 20, 2022 թ.**:

Նամակի վերնագիրը. *GBSS research 2022*

«Պտղի սեռով պայմանավորված խտրական ընտրության և հարակից վնասակար գործելակերպերի կանխարգելումը Հարավային Կովկասում. աջակցություն տարածաշրջանային, ազգային և հարավ-հարավ նախաձեռնություններին» ծրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից՝ ՕքսԵՋեն հիմնադրամի հետ համագործակցությամբ: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից: